

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 16

1 Դեկտեմբեր 1892



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ.

ՃԻՎԵԼԷԿԵԱՆ

Պատր Ար ճառարէսի Թիւ. 20

1892

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ԲԱԶՄԱՏԵՍԱԿԵԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆ.—Յ. Վ. ԲԱՆԻՆ
2. ԿԱԹՈՂԻԿԷ ԿՐԾՆՆ ՅԱՆԴՂԻՍ.—Յ. Յ. ԱՆՆ
3. ԲԺՇԿԱԿԱՆ.—Յ. Յ. ԱՆՆ
4. ԳԻՏԱԿԱՆՔ —Յ. Յ. Ա.
5. ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ—Յ. Վ. Բ.

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երրորդ Տարի

թիւ 16

1 Դեկտեմբ. 1892

ԲԱԶՄԱՏԵՍԱԿԵԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆ

(Շար. եւ վերջ):

Բաղմատեոսեանց դպրոցն՝ մարդկային տղի մեութեան զէմ երեք զլնաւոր առարկութիւններ կ'ընէ: Առաջին առարկութիւնը կ'առնու այն եղանակէն՝ որով Ամերիկա կրցաւ բնակչօք բազմանալ հին աշխարհի ժողովրդոց մեջոցով. երկրորդ առարկութիւնը կ'առնու մարդկան արտադ արտադ շատնալէն եւ երրորդը՝ լեզուաց պէսպիսութիւնէն: Արդ՝ տեսնեմք այժմ հետզհետէ այդ առարկութեանց արժէքը:

Ա.—Բրիտանիոյ Կոլումպոսի ձեռամբ 1492ին դանուող Ամերիկան հին աշխարհի ցամաքներուն պէս կրցած էր բնակչօք լեցուիլ: Այգլիի խօսք մը, որ երբեմն յանդուզն կ'երեւէր, լրջօրէն տարախուսելու տեղի չապր երբեք: Զի գիտեմք թէ հին ժողովուրդներ եւ ազգեր զիւրաւ կրցան մանել յԱմերիկա ու բազմաթիւ եւ ազգի ազգի բնակիչներով լեցունել զայն: Զառաջին տեղին ունին Փիւնիկեցիք, որ նոր աշխարհի շատ կղզիները այցելած են: Սկանաւինաւեանք ալ իրենց մասն ունին այս բանիս մէջ: Այս ազգերու ձեռամբ Ամերիկայի բազմամարդաշատուն ապացոյցը կը զանեմք Իսլանտայի զիւյտաղնական պատմութեանց մէջ:

Հին աշխարհն Ամերիկայի հետ հաղորդակցութեան մէջ կրցաւ մտնել նաեւ Պեհրինկի նեղուցով, որոյ ամենափոքր ընդարձակութիւնն Վաթսոնուզեց հաղարամետր է: Դիտուած է թէ սառուցեալ ովկիանոսէն բղխող ընթացիկ ջուրն՝ Պեհրինկի նեղուցը սնցած պահուն, կ'առնուէ կը տանի դէպ ի նոր աշխարհ այն ամեն նաւերը որք խաղաղական Ովկիանոսին մէջ կորսուած են: Կրնայ նաեւ ըսուիլ թէ հաղորդակցութիւն կրցաւ հաստատուիլ Ալէուտեան կղզեաց միջոցաւ, եւ այս բանիս հաւանականութիւնը կը հիմնուի նոցա բնակչաց լեզուին եւ սովորութեանցը վերայ՝ զորս պահած են մեծաւ մասամբ:

Ամենայն ինչ մեզ կը հաւաստէ թէ Ամերիկայի բնակիչներն ալ նախնական ամողէ մը սերած են: Մեք կը գտնեմք ի նոսա այն ամէն էական յատկութիւնները՝ որք մարդկութիւնը կը կազմեն. անդ կը գտնեմք նաեւ նախնական աւանդութիւնները՝ որք կը պատկանին արարչութեան մարդոյ, ջրհեղեղի եւ ցրման ժողովրդոց: Այդ աւանդութիւնք՝ զորս համօրէն բնակիչք աշխարհի պահած են, թէեւ այլայլելով երբեմն զայնս զիցաբանական առասպելներով, ակն յանդիման կը ցուցնեն հասարակ ծագում մը: Ինչպէս բացատրելու է այդ ներդաշնակութիւնը, այդ նմանութիւնները՝ առանց մարդկային ազգի միութիւնը ընդունելու: Եթէ Ամերիկայի, Ասիոյ, Եւրոպայի եւ Ափրիկէի բնակիչք մի եւ նոյն նախածնողքէ սերած չեն, բազմաստիակեանք պարտին դէթ մեզ ծանուցանել այն մարդիկները՝ որք այդ երկիրները լեցնող ցեղերը ծնած են: Բայց անկողմնակալ պատմութիւնն, զարաւոր յիշատակարաններով զինուած, կու գայ խայտառակել նոցա յանդուգն ասութիւնները՝ որք աւազի վրայ հիմնուած են: Երբեք կարելի չէ ամրագնդել զրութիւն մը՝ հիմնելով զայն ձրի ստորաստութեանց վրայ: Հետեւաբար, նոր-Աշխարհի բնակիչք եւս Ադամէն սերած են. եւ Աստուածաշունչն միշտ իրաւունք ունի ըսել թէ «Աստուած արար ի միջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան բնակել ի վերայ երեսաց ամենայն երկրի»:

Բ.—Ի՞նչ ըսելու է այն առարկութեան, զոր Պ. Շ. Վոկդ կ'ընէ նկատմամբ արագ արագ աճման թուոց մարդկան: Լրջօրէն խորհուած առարկութիւն մը չէ այս, դիւրին եւ միանշանմայն հատու պատճառարանութեամբ մը կը հերքուի: Եթէ նոյն եւ իւր որդիք միայն վեց զաւակ ունեցած ըլլային, երկիրը՝ չորս հարիւր տարի վերջը՝ ութ հարիւր միլիոն բնակիչ պիտի

ունենար։ Այն ժամանակի արդատաւորութիւնը ներկայ ժամանակի արդատաւորութիւնէն չկրնար դատուիլ։ Այս օրուան օրս ետամուտութիւն՝ եւ մարդկային կարեաց յարուցած հազարաւոր արգելքներ, զաւակաց թիւը նուազցնելու կը ձգտին, ողբալի կացութեան մը մէջ թողուլ ընկերութիւնը։ Բայց ջրհեղեղէն այն ինչ մաղապուր ճողոտրած նոր սերունդն՝ որ զերկիր կը դրաւէր, աղնուութեամբ կը գործածէր իւր կենաց կորուրդ, եւ Աստուծոյ «աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր» պատուիրանը արդեամբ կը կատարէր։ Միթէ՞ զարմանալու եմք, եթէ Նոյի մահուանէն քիչ մը վերջը, Եգիպտոսի մէջ բաղմաթիւ բնակիչներ կը գտնուին, եւ եթէ Նինուէ եւ Բաբելոն մարդաշատ քաղաքներու կարգը կը դասուին։ Բայ աստի, պատուութիւնէն զիսնք թէ Բաբելոնի աշտարակաշինութեան ժամանակ հազարաւոր մարդիկ կ'աշխատէին, եւ, յետ խառնակութեան լեզուաց, մարդիկ ցրուեցան ընդ ամենայն երեսս երկրի։

Ընտանիքներն բաղմաթիւ էին, եւ, բաղմատեսակեանց յիշած այլ եւ այլ երկիրներ հաստատուելով, հեշտեալ միլիոնաւոր բնակիչներ կը ցան տալ։ Գիտնականք կը հաստատեն թէ, Աբրահամի ժամանակ, Քաղդէաստան, Եգիպտոս եւ ուրիշ գաւառներ՝ հզօր թաղաւորներ ունէին, որ այն գաւառներու հարստութիւնները կը շահագործէին եւ միանգամայն մերձաւոր աղգաց ստապատակութիւններուն եւ շահատակութեանց դէմ կը պաշտպանէին։

Եթէ Նոյի սերնդեամբ երկրիս բնակչաց բաղմանալը զմեզ յապուշ կը կրթէ, պարտեմք գիտել թէ այդպիսի զարմանալի աճումն տեղի ունեցաւ նաեւ ի հետագայ դարս Յամին 1589, մի քանի Անգղիացի նաւարեկեալներ խաղաղական Ուկրանու կղզեաց միոյն վրայ կ'եւնեն։ Ութսուն տարի վերջը, այն կղզին երկոտաւան հազար բնակիչ ունեցած էր. չորս մայրեր եւեթ կային ի կղզւոջն յետ նաւարեկութեան։ Այդ իրողութիւնն սքանչելի չէ, եւ ջրհեղեղէն ետքը եղածին վրայ մեզ գաղափար մը չկրնա՞ր տալ։

Ուրեմն ստոյգ է թէ Սէմ, Քամ եւ Յաբէթ երկրի այլ եւ այլ մասերը միլիոնաւոր բնակչօք լեցունելու պատճառ եղան։ Այս բնական բեղմնաւորութեան կարելիութեան ոչ ինչ կը հաւատակի, եւ այսպէս բաղմատեսակեանց երկրորդ առարկութիւնն կերպիւ իւրք նպատաւոր կ'ըլլայ հաւաստոյ ճշմարտութեան,

յաւելլով նոր փայլ մը կաթողիկէ վարդապետութեան վրայ նկատմամբ միութեան ազդի մարդկան:

Գ. Լեզուի բնութիւնն ինչ է: Մարդկային զբաւ է, թէ Արարչին պարզեւ: Իմաստասէրք միտքան չեն յայտն Բմանք Կ'ըսեն թէ լեզուն բնական յայտնութիւն մի է, ինչպէս Ռբնան եւ Մաքս-Միւլլէր: Այլք կը սնդեն թէ լեզուն՝ արուեստական, զաշնադրական մի պիտ է մարդոյ: Բայց այդ կարծիք այժմ թողուած է: Գիտնականք ոմանք կը հաստատեն թէ խօսքն՝ բնական լեզուի նախնական կազմութեան արդիւնքն է: Վերջապէս, բազմաթիւ աստուածաբանք Կ'ուսուցանեն թէ լեզուն գերբնական յայտնութիւն մի է: «Բարբառն, Կ'ըսէ Տը Պօնալ, մարդուն արուեստ Աստուծոյ գերբնական իմն եղանակաւ, այնպէս որ խորհողութեան զնեւ եկաւ բարբառ, եւ բարբառոյ խորհողութիւնն» Սակայն Պոսիւէ, Ս. Բարբեզ, եւ Ս. Գրիգոր Նիւսացի այդ կարծիքէն չեն: «Մեր խօսելու կարողութիւնն, Կ'ըսէ Ս. Գրիգոր, Աստուծոյ ձեռաց գործն է, բայց մասնաւոր բառերու գիւան՝ մեր մտաց գործն է»

Այսպիսի հանճարեղ եւ հայակապ արանց պաշտպանած կարծիքներուն վրայ վիճելը մեզ չիցնար, ի վերայ այսր ամենայնի, Աստուածաշունչը բանալով, եւ Նրննդոյի առաջին զուխնորը կարդալով, կը տեսնենք թէ Ազամ իւր ստեղծման առաջին օրերէն սկսաւ խօսիլ, եւ թէ լեզուաց զանազանութիւնը աշտարակաշինութեան ժամանակ հաստատուեցաւ:

Այժմ կը հարցունենք թէ, լեզուաց պէսպիսութիւնէն մարդկային ազդի միութեան զէմ ապացոյց մը կընայ հանուիլ: Կը պատասխանեմք թէ, բնաւ ամենեւին:

Բանասէրք՝ լեզուները երեք տոհմի բաժնած են, հետեւելով Նոյի երից որդւոց անուանց: ¹⁰ Սեմականն՝ որ կը պարունակէ Երբայեցերէնը, Քաղդէարէնը, Արարերէնը եւայլն: ²⁰ Յաբեթականն՝ կամ Հնդկարոպականն՝ որ կը պարունակէ Հնդկային, Կովկասեան, սլաւական լեզուախմբերը, յոյն, լատին Հայ, զանազիկ լեզուները եւայլն: Դուքանականն՝ որ կը բովանդակէ ճինական, թաթարական եւայն լեզուները: Ուրիշ բառերով՝ բոլոր համար, լեզուք՝ երեք զխումբը զստակարգերու կը բաժնուին: Միաժանկային լեզուք, միաժանկ բառերէ կազմեալ, Կյոզական կամ բազապրական լեզուք՝ արմատականներէ կազմեալ, որոց վերայ կը յաւելցուին յետագոյ, նախադաս մասնիկներ եւ վերջաւորութիւններ, թաւալական կամ վտխոտական (flexionelle)

լեզուք, որք իրենց նախնական ձեւը կորուսած են միտքը կատարելագոյէս բացատրել կարենալու համար: Թաւաչական լեզուաց մէջ արմատն՝ եւ ժամանակի, եղանակի, եւ յարարերութեան տարբերութիւնները արտայայտելու համար արմատոյն վրայ յաւելեալ բառերն, զգալի փոփոխութիւններ կը կրեն. եւ զժուար է զիանալը թէ անոնք ինչ էին ի սկզբան անոյ ձեւաց լեզուն իբրեւ օրինակ կրնայ ծառայել միալեզուացին լեզուին. Թուրքերէնը, որոյէս էն, կրնանք ցուցնել իբրեւ օրինակ կցողական լեզուի. սակայն պէտք է զիտել թէ բոլոր թաւաչական լեզուներն, ըստ լեզուաքննական սկզբանց, անցած են այն երկու միջին վիճակներէն՝ զոր նշանակեցինք վերեւ:

Այսու հանդերձ, մի քանի գիտնականք, եւ ի մասնաւորի Պ. Բոլթ, կ'ըսեն թէ եւ ոչ մի լեզու կարող է միալեզուացին վիճակէն կցողական վիճակի, եւ կցողական վիճակէն թաւաչական վիճակին անցնիլ, որով սա եղբակացութիւնը կը հանձն թէ ժողովուրդք եւ լեզուք հասարակաց ծագումն եւ սկզբնաւորութիւնն չունին:

Այս առումիւ գիտական արժէքն ինչ կրնայ ըլլալ. Պ. Բոլթ եւ իւր հետեւողք թերեւս կը մտնան թէ բոլորովին եւ արատաւար միալեզուացին, կցողական եւ թաւաչական լեզու մը գտնել անկարելի է: Թէեւ ակրով նշան մը կը տեսնուի, բայց գիտութիւն լեզուախումբերու մէջ կը գտնենք բառեր՝ որք ոչ միայն անցողութեան, փոփոխութեան հարաւորութիւնը, այլ նաեւ իրականութիւնը կը հստատեն:

Ոմանք կը պնդեն թէ վերայիշեալ երեք տոհմերէն լեզուաքննական ոճով հանաւած արմատներն բոլորովին անվերածելի են, եւ որմէ կ'եղբակացնեն թէ այն երեք լեզուներն հիմնովին իրարմէ զատ եւ սրոշ են: Բայց այդ եղբակացութենէն ալ հրաժարելու է: Բանասիրաց վերլուծած արմատներն կը ներկայացնեն արդեօք լեզուի սկզբնաւորութիւնները. կամ թէ այն արմատներն ալ միակ մայր լեզուի մը բառերէն վտիւ առնուած են:

Հաւանական է թէ այն արմատներն ալ՝ նախնական լեզուի մը, (որ ժամանակ անցնելով ալլափախուած է), փոփոխութեանց արդիւնքն ըլլան: Լեզուի մը բնականաւոր օրէնքն է բնական կատարելութեան ձգտիլ: Լեզուն՝ իւր զարգացման բնագոյնացող խտիւղանալով արդիւնդներուն շուտով կը յաղթէ, եւ օր մ'ալ աւելի պերճ եւ աւելի գիտնական ձեւ մը կ'առնու: Այս բանիս

ճշմարտութեան համոզուելու համար չատ եւ բաւական է արդի լեզուները քննել: Բաց աստի, կրնա՞ն արդեօք չղիտնալ ձեւացընել թէ վայրենի ազգաց բառարանն իսկ՝ ընդ մէջ երկուց սերնդոց բոլորովին կերպարանափոխ կ'ըլլայ: Դժուարին է, վտանգաւոր չըսելու համար, հիննել իւր պատճառաբանութիւնը արմատոց անվերածելիութեան վրայ՝ շատ մը զատ լեզուաց դոյութիւնը ցուցնելու եւ մարդկային ազգին բազմաւորութիւնը հաստատելու համար: «Լեզուազոտական ուսումն, կ'ըսէ Վուաթնէյ, երբեք պիտի չապացուցանէ ո՛չ լեզուի առաջին ճիւղերուն հաւասարակ ըլլալը, եւ ո՛չ ալ անոնց պէսպիսութիւնը»:

Սահման մը չկրնար գծուիլ պէսպիսութեան, որ միեւնոյն ծագումն ունեցող լեզուաց զարգացումէն կրնայ յառաջ գալ:— «Լեզուաց ի խումբս բաժանմանէն, կ'ըսէ Ռընան, ոչ ինչ կարէ հետեւիլ նկատմամբ նախաւոր բաժանման ազգի մարդկան: Մի եւ նոյն ծագմամբ կամ այլ եւ այլ երեւմամբ մարդկային ազգը յառաջ եկած է: Այս խնդրով զբաղիլ չեմ ուզեր, զի բանասիրական խնդիր մը չէ այն: Ինչ որ, ընդհակառակն, մտադիր եմ ձեռք ցուցնելու է թէ, բանասիրական արուեստն նոր լոյս մը չսփռեր»:

Ըստ ասութեան Այատընի «Այժմ տաժանելի ուսումնասիրութեամբք ապացուցեալ է թէ բոլոր լեզուներն ծագումն առած են մէկ հաւասարակաց արմատէ, որոյ սկզբնատեղին եւ խանձարուրն եղած է Արեւելք: Երբեմն բազմաթիւ մայր-լեզուներ կը զանազանուէր, իսկ այժմ քոյրեր միայն կը ճանչցուին, յորոց սմանք երկցազոյնք, եւ այլք կրտսերազոյնք, բայց ամէնքն ալ հաւասարապէս ծագած են նախնական լեզուէ մը՝ որ այժմ անհետ եղած է»:

Ո՞րն է ուրեմն այդ նախնական լեզուն: Մի քանի պատմաբանք, ընդ որս եւ Յոթսէպոս, եւ այլ զիտնականք ոմանք կը կարծեն թէ Եբրայեցիներէն ըլլայ այն: Բայց հիմա այս կարծիքս առհասարակ չընդունուիր:

Ըստ բանասիրական գրութեան մը՝ որ ճշմարտամասն երեւոյթ մ'ունի, լեզուներն ի սկզբան անդ, միալանկ էին. յետոյ կյուղական եղան, եւ վերջապէս թաւալական վիճակի փոխուեցան: Իսկ արդ եբրայական լեզուն մի զմիոյ կնի շարուած վանկերէ զատ՝ ուրիշ բան մ'ալ ունի. բաղադրեալ բառեր եւ հին ասացուածներ կը գտնուին ի նմա, որք հաւանականաբար կը վերաբերին լեզուի մը՝ որ ի թանձրամած խաւարի դարուց կորսուած է: Եբրայագիտաց ծանօթ է, օրինակի աղադաւ, թէ եբրայեցեւ

րէնի բայերն հինգ զլիսաւոր սեռ ունին, առաջինն՝ առհասարակ ներդործականի իմաստ ունի, երկրորդը՝ կրաւորականի, երրորդը՝ պատճառականի, չորրորդը՝ երրորդ օրինակի այլ եւ այլ նշանակութեանց կրաւորական իմաստները, եւ հինգերորդը՝ փոխադարձ կամ հերանուհական բայերու իմաստը: Ունի նաեւ չորս եղանակներ, սահմանական, հրամայական, աներեւոյթ եւ ընդունելութիւն, եւ երկու ժամակներ՝ անցեալ եւ ապառնի:

Այս ումէն ըսածներէս ակներեւ կ'երեւի թէ երբայեցերէնն, իւր արդի վիճակին մէջ, նախնական լեզուն չկրնար ըլլալ Գիտնականը իրենց տաղանդը մայր-լեզուի հետազօտութեանը կրնան առատօրէն դործածել, ասպարէզն ընդարձակ է, եւ ցայսօր եղած բանասիրական եւ լեզուաքննական դիւտերն արդարեւ մեր յարգանաց եւ հիացման արժանի են:

Բայ յայցանէ, Պ. Շամբոլիոնի եզրկտական միհննադրոշմներու, եւ Պ. Օրլերոյի Ասորական բաւեռագրերու վրայ ըրած ուսումնասիրութիւնը մեծամեծ ծառայութիւններ մատուցին պատմութեան, որ աւելի բացայայտ եւ լուսաւոր կերպով մեզ կը յայտնէ հին ազգաց բարքերն ու շահատակութիւնները:

Այս բանասիրական խնդիրներն որչափ եւ կարեւորութիւն ունենան, սա ստոյգ է թէ լեզուաց պէսպիսութիւնն չէ կարող մարդկային ազգի բազմաւորականութեանը արտացոյց ըլլալ: Այս նկատմամբ ալ կաթողիկէ վարդապետութիւնն անխախտելի եւ հաստատուն կը մնայ, եւ ընտել պարտութիւն չկրեր բազմատեւականաց ըրած յարձակումներէն, որք վայրապար իրենց փառները կը հիմնեն Ամերիկայի՝ հին աշխարհի մարդոց միջոցաւ բազմամարդանալուն անկարելիութեան, մարդկան անհաւրին եւ արագ արագ շառնալուն ու լեզուաց պէսպիսութեան վերայ:

Յ. Վ. ԲՕՂԱԹԵԱՆ



ԿԱԹՈՂԻԿԷ ԿՐՕՆԵ

ՅԱՆՓՂԻԱ

Վերջին ժամանակներս Անգլիոյ բողոքական Եկեղեցին խիստ բանակիր մ'ունեցաւ:

Թարգ. Lord Alwyne Compdon, Ely Բաղքին բողոքական Եպիսկոպոսն, Մեծ Պաճոյ սկիզբները ժողովրդեան կ'ուզէր հովուական մ'որ գրեթէ բառ առ բառ ընդօրինակութիւնն էր կախողիկէ Եպիսկոպոսաց այս առթիւ գրած Հովուականներուն. այսպէս՝ զինանշանն հանդերձ եպիսկոպոսական թագիւ եւ խաչիւ տիազոմներն եւ հետեւեալ սկզբնաւորութիւնն թէ ես... Եպիսկոպէս Ely շնորհիւ Աստուծոյ. եւայլն: Այս հովուականով իր ժողովուրդն ազատ կը հռչակէր ծոմապահութենէ ամբողջ Մեծ Պաճոյ ժամանակ, տիրող հիւանդութեան պատճառաւ: Այս պատուէրիս հնազանդողք հանապազօր՝ իբր ապաշխարութիւն՝ եօթն սաղմոսները պիտի բռնէին:

Շատերն կ'ուզէին որ Worcester ի բողոքական Եպիսկոպոսն ալ իր Պաշտօնակցին օրինակին հետեւի, վասն զի ժողովուրդն մեր վերը յիշած պատճառի համար հարկաւոր եւ անհրաժեշտ համարէր այսպիսի թոյլտուութիւն մը:

Worcester ի Եպիսկոպոսը փոխանակ հովուականի, կորուկ եւ չորհամակ մը կ'ուզէր իր ժողովրդեան, յորում կը գրէր թէ «ինքն տնօրինելու իշխանութիւնն չունի, մանաւանդ այնպիսի խնդրոյ մը մէջ, որ եւ ոչ իսկ զոյութիւնն աւելը անսկիւրան Եկեղեցւոյ մէջ»:

Այս երկու գրութիւններս անգլիական Եկեղեցին երկու կողմակցութեան բաժնեցին. կրօնական թերթերն լիք են թեր ու զէմ միճարանական յօդուածներով:

Կուսակցութեան մին, որ մեծամասնութիւն կը կազմէ, կ'ուզէ պաշտպանել թէ, ծոմապահութիւնն ընդհանուր եւ էական կանոնն է Քրիստոսի Եկեղեցւոյն, որով եւ ի կրօնարութեան է բոլոր կրօնական հաւարակութեանց մէջ, ուստի եւ եպիսկոպոսունք կրնան ըստ իրենց առաքելական ճոխութեան տնօրինել այս պատուէրս:

Իսկ անսկիւրան եկեղեցւոյ կանոնադէտք կ'առարկեն թէ, Եկեղեցւոյ ընդհանուր օրէնքը միայն Եկեղեցւոյ զլուսը այսինքն

Եօրքի եւ Քանդորպէրի արքեպիսկոպոսները իրենց թեմա-
րուն մէջ կրնան անօրինել, ուստի եւ եպիսկոպոսները միայն
իրենց արքեպիսկոպոսներուն հրամանաւը կրնան այսպիսի անօ-
րինումներ շնորհել:

— Այս բանտիտիւր մասնանիչ կ'ընէ այս մուրեկաց մթին եւ
շիտթ զաւաղաբններ եւ հարկաւորութիւնն օրէնադրական հե-
ղինակութեան: Որով շատերն, ինչպէս Brechin քաղքին անդ-
ղիական Եպիսկոպոսը, գիտնականն Forbes, կը յայտարարէ որ
ցայսօր իսկ Քաճանայապետը իրաւասութիւն ունի Անդղիաց վրաց,
որովհետեւ, ըստ իր կարծեաց, Արեւմտից Գերագոյն Պատրիարքն
Ս. Քաճանայապետն է: Արդ ինչո՞ւ համար եւ ի՞նչ հարկ վո-
րանակ Պատրիարքին՝ Արքեպիսկոպոսաց գիմելու, եւ նոյն իսկ
այս արքեպիսկոպոսներն ալ որմէ՞ ընդունած են իրենց իրաւա-
սութիւնը:

Այլպէս ուրեմն այս ամենածանր եւ դժուարին բանակը-
որներս կը յարուցանեն դժուարալինճիւ ինտիլիներ, որոնք շատե-
րուն գարծին սկզբնապատճառներն են:

Անդղիական թերթերը կը գրեն, «Գէթ հռովմէական կա-
թոլիկէներն այսպիսի ինտրոյ մէջ գիտեն թէ որո՞ւն պիտի գի-
մեն: Անոնց վարդապետութիւններն յոտակ են եւ որոշ եղանա-
կաւ մեկնուած, օրէնքները՝ ճիշդ են, եթէ ինչ ինչ դժուարու-
թիւններ ալ ունենան, գիտեն թէ ուր պիտի գիմեն եւ վստահ
են թէ պիտի ընդունին իրենց տարակուսանաց պատասխանները:

Յ. Յ. Ա.Ա.Ա.

ԲԺՇԿԱԿԱՆ

ՅՈՐԴՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՍՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՎՐԱՅ

M. Mosso չափական ուսումնասիրութիւններ զրաժ եւ այնպիսի փորձեր կատարած է, որ Ֆիզիզապէս յոգնութեան մեքենական ազդեցութիւնն ու չրջանը լիապէս մտանանիշ ընկողմ գոհացուցիչ արդեանց յանդած եւ նոր գիւտեր ըրած է: Իր գիտական փորձերուն արդիւնքն սա է թէ, կատարելապէս հանդիւրձած մարդու մը կարելի է ուրիշին յոգնութիւնը հաղորդել, առ այս բաւական է եթէ պարտասեպ մարդու մը արեւնը ներմուծուի:

M. Masso տակաւին կը զբաղի այս խնդրովս, որուն կ'աջակցի նաեւ D. Salvioli: Այս վերջինս ի մասնաւորի Յոգնութեան մարտողական դործարանաց վրայ ունեցած ներդրումութիւնը կ'ուզէ իմաստասիրել:

Մեծահայ սեղան մը նա՝ ամենատարղ մոունդն անդամ, քանի որ մարտած չէ, կը ջլտալ մարդու ֆիզիզական պիւրն, մարտողութեան համար բաղմաղիմի կանոններ եւ գրութիւններ կան: Հիպոպիրատ կ'ըսէ, Coctioni magis conducere quietem (մարտողութեան կ'օգնէ հանգիստն), Իտալացիք այս սկզբանս համաձայն կերակրէ վերջ կը քնանան: Սպերմայի բժշկութեան կաճառն ճիշդ սա գրութեան հակառակ գրութիւն մը ընդգրկած է. Post coenam stabis vel mille passus deambulabis: Սեղանէ ետքը ոտքի վրայ կեցիր կամ հազար քաղ քալէ: Պէտք ենք դիտել սալ որ հռովմէական ոտքն 0, մ 75 կամ 1, մ 50 է: որով այս հաշուով պէտք է առ նուազ 1 $\frac{1}{2}$ ք. միւն քալել:

Ինչպէս որ կը տեսնենք, մարմնական շարժում խիստ չափաւոր ըլլալով, այս գրութեանս համաձայն կզերանայնորու եւ կրօնական Միաբանութեանց մէջ ճաշէ եւ ընթրիքէ վերջ ժամ ու կէս հանգիստ կայ: Իտալիոյ եւ Գաղղիոյ Մենաստանաց շքաւոր պարտէզներու մէջ այս ժամերու կը ճեմեն կրօնաւորք:

Ըստ ոմանց՝ շարժութիւնը կը դիւրացնէ մարտողականու-

թիւներ, չափաւոր չարժուժ երբեք արդեւ չէ մարտողականութեան, միայն չափազանց մտաւորական եւ մարմնական աշխատութիւնք, ձեռագործք, փեսասկար են եւ կը խանգարեն մարտողական գործարանաց բնական վիճակը, բարեխառնութիւնն ու եղանակը: Այս սկզբունքս դիտական փորձիւ եւ եղանակաւ հաստատուած չէր. M. Salvioli անհերքելի եղանակաւ եւ դիտական փորձերով հաստատեց այս զրութիւնս: Բժշկութեան մէջ դիտական նոր փորձերը կը կատարուին անամնոց եւ զխաւերաբար շանց վրայ, վասն զի աւելի դիւրին է զատնք ենթակելն այն փորձերուն, որոնց ստուգութեան վրայ կատարելապէս ապահով չենք: Դիցուք թէ գտնուին նաեւ աջնպիսիք որոնք յանձնառու ըլլան զրամբ համար ճաշէ եւ բնթրիքէ վերջ երկու երեք մզն հետիոտն քաղել. բայց կարծենք թէ զժուարին, եթէ ոչ անկարելի, է գտնել աջնպիսի մահկանացու էակ մ' որ նոյն իսկ այս բռնադատեալ չարժուժէս վերջ հաւանի եւ թողու բժիշկն որ ներմուծի գործիքով կամ նժդարաւ պարզէ իւր ստամոքքը, որպէս զի բովանդակութիւնը տարբարուծէ: Շուն մ' այս ամէն փորձերուս կ'ենթարկի, առանց բողոքոյ եւ ցաւի ճիշ մ' արձաւ կելու:

D. Mosso, Լիայտգուրդ շան կերակուր տալէ եւ յազեցրնելէն վերջ, որոյ քանակութիւնը եւ ծանրութիւնը կանխաւ կը չափէր, խօլ եղանակաւ կը վազցընէր: Փորձն աւարտելէ եւ շան ըրած մղմնները չափելէ վերջ, կը պարպէր անոր ստամոքսը, որոյ բովանդակութիւնը կը տարբարուծէր: Շատ անգամ, որպէս զի չոխպի իւր քննութեանց մէջ, շան մարմինն ներքեւ կը ներմուծէր բնափիոն (apomorphine), որ իսկոյն կը փսխէր, եւ որով ստամոքսի մէջ եղող ամբողջ նիւթերն կրնար առաջի աչաց ունենալ: Միեւնոյն փորձերս կը կատարէր ո՛չ յոգնած շուններուն վրայ: Այսպէս երկու շանց ստամոքսային արտազրութիւններն առջեւ ունենալով, կրնար գոհացուցիչ գաղտնար մ' ունենալ այս նիւթոց թթուութեան վիճակին, իրենց զանազան տարբերուն եւ մարտողական կարողութեանց վրայ:

Այս ամէն փորձերս, որոնք Regii Lincei Հանդէսի մէջ մանրամասն գրուած են, առաջի աչաց ունենալով, սա եզրակացութեանց կը յանդիմնէ:

Յոգնութիւնը զգալապէս կը նուազեցընէ ստամոքսային նիւթը (Suc gastrique): Այսպէս, 15 վայրկենի մէջ, ո՛չ յոգնած անասնէն կրնանք մինչեւ 25—30 մ. կ. ստամոքսի նիւթ ստա-

նալ. մինչդեռ խոնջածէն, հազիւ մի քանի կաթիլ, 5—10 մ. կ. ոչ յոգնած անասնոյն եւ խոնջածին ստամոքսային նիւթին մէջ ալ մեծ տարբերութիւն եւ զանազանութիւն կայ: Առաջնոյնը անխառն, լճիտ, ջրոտ, զեղնադոյն է, մինչդեռ երկրորդինը, թանձր, մաղաստ, սպիտակադոյն:

Հիւթիւ թթու վիճակն ալ տակաւ կը տկարանայ: Ստամոքսային հիւթը (le suc gastrique) բնական վիճակի մէջ 4 կ. (gs) 7, այսինքն H C J $\%$ թթուութիւն ունի. մինչդեռ վատաւ կարելի չունենումը, 1 կ. 85 այսինքն H C J $\%$:

Հետեւաբար մզոններ քաղող անասուններ, ստամոքսային հիւթին մէջ գրեթէ աննշան քանակութեամբ կլորիւր (chlorure) կայ: Այս փորձերս ակնբերեւ եղանակաւ մասնաձիւ կ'ընեն յաշուութեան մարտողութեան վրայ ունեցած մեծ ազդեցութիւնն ու դերը:

Յոգնութիւնով մեր ստամոքսային հիւթը կը կորոնցընէ իր մարտողական զօրութիւնը: Հետեւաբար յոգնութիւնը կը խանգարէ, կ'արգելու կը կտակցնէ եւ կը զփութացընէ մարտողականութիւնը: M. Salvioli ասոր փորձն ըրաւ. շուն մը ստամոքսին մէջ ներմուծեց որոշ քանակութեամբ ալբումին (albumine), երկու ժամ վերջ, ստամոքսային հիւթն վերստին կը թթուանար:

Բնածին ունակութեամբ կամ սափորութեամբ է որ կը կատարենք մեր գործերը. որոյ ազատցոյցն է կերակրէ անմիջապէս վերջ չըպելը: Ո՞չ ապաքէն իւրաքանչիւր ոք բնդ ճաշկն անդիտակցարար կը բազմի, կ'ընկողմանայ, որպէս զի մարտողութիւնը հանդարտի իր գործն աւարտէ: Բայց կերակրէ վերջ քաղկն ունի աջակոխ արգիւնքներ, զորոնք չենք գիտեր: Այսպէս թէ եւ չմարտած հիւթերը աւելի զփութարութեամբ կը մարսուին, բայց աւելի զիւրութեամբ ալ ստամոքսէ աղեաց կամ փորտակայ կ'անցնին: D. Salvioli փորձերն սա մեր բաժը կը հաստատեն եւ հաւանականաբար ջղային միանանց սարուրեր վիճակն այս անցումին ներքին սրտաճառն է: Հին բժիշկները, զորոնք միայն կ'աշխատէին, գիտէին այս անցումն ու անոր պատճառները: Johannes Viridetus, մեծանուն Իտալացի բժիշկին, ըսած էր, մեր բժիշկներէն շատ յատուց. (200 տարի յառաջ)

Ingesta enim adhuc semicocta, succussationibus illis ad intestina devolvuntur»

Այս ճշմարտութիւնս, որուն փորձառական հաստատութեան կամ ստուգութեան համար 200 տարի սպասեցինք (Viridetustի

մատեանը տպուած է ի Gènes 1691) պէտք է որ մեզ խորհրդադածել տայ: Իրուացի եւ նշանակիչ չէ՞ այս վճիռս թէ «Optimi consulores mortui».

Հին բժիշկներն աւելի մտադիր, խորաթափանց, մանրադնինն էին. այս, չունէին մերոնց փորձառական գիտութիւնը, բայց խմտտուն, խոհեմ եւ շրջահայեաց էին. մերոնց գիտութիւնը չունէին. սակայն առջի յատկութիւնը երկրորդ յատկութիւնէն առաւել նախամեծար չէ՞: Արդի ժամանակիս բժիշկները հնոց գրութիւնները, տեսութիւնները կը սկսին ընդգրկել. յետախաղաց արդարութիւն, որ միանգամ եւս կը հաստատէ հանրածանօթ առածիս ճշմարտութիւնը, Nil sub sole novum: Տակաւ առ տակաւ մենք հին բժիշկներուն գրութիւնները ու տեսութիւնները պիտի գրկաբաց ընդունինք:

D. Salvioliի գիտական խուղարկութիւնքն այնու մանաւանդ շահեկան են, որ մենք՝ եթէ կրնանք զերծ մնալ բազմադիմի հիւանդութիւններէն, անկարելի է՝ որ չյօդնինք, չթուլանանք եւ մեղկամտնք: Իտալացի բժշկին պատուէրներն առ հասարակ առողջապահական են. արդ առողջութիւնը կենաց աեւողուս թեան հիմնն ու առհաւտողեաց գրաւականն է:

Յ. Յ. Ա.Ա.Ն.

ԳԻՏԱԿԱՆՔ

Նոր հրաքանի մը: Ս. Բէդէրսպուրիէ հեռագիր մը, Օգոստոսի 26ին մէջ կը հաղորդէր հրաբլիւի մը գոյութիւնն յԱմատ, Կաւկասիոյ մէջ: Այս նոր հրաբուլիւէս մինչեւ 60 մ. բարձրութեամբ կը ժայռքին քարեր լալա եւ կաղեր, որոնք օդոյ մէջ 30 մ. բարձրութեամբ հրեղէն սիւններ կը կազմէին: Ամատ քաղաքէն 30 ք. մ. հեռու լսելի էին ստորերկրեայ խուլ ձայներն ու խլրտումները:

Բարեբաղդարար այս նոր հրաբուլիս մարդու կորուստ չի պատճառեց: Գիւղացիք ամենքն ալ ի վախճանատ ածապարտք են:

Շումերոս զինակաւորութիւնն ի Գաղիա: Շուներուն վիճակազրուածքն. միթէ փիլիսոփայական չէ: Շունը մարդու բարեկամն է եւ հաւանականագոյնս մարդն ալ շուներուն:

Գիտնք թէ որչափ շուն կ'աջ Գաղլիոյ մէջ:

Կեւտաց երկիրն ընդ ամէնն ունի 788,088 տան շներ եւ 2,069,569 որսի, անտառի եւ հովուական շներ, որոնց ամբողջին գումարն է Երէն ժելոն ունի հարէր յիսուն եօթն հազար վեց հարէր յիսուն եօթն:

Պրորէն Դուրալը: D. E. Lamp Պրորէն մոլորակի վրայ շահեկան եւ գիտական տեղեկութիւններ գրած է Mémoires de l'Observatoire de Kiel թերթին մէջ: Մոլորակիս աներեւութանալն ցայսօր գիտական առեղծուած մըն էր աստղաբաշխներուն: Պրորէն 1884 երեւցած էր. ըստ աստղաբաշխից՝ 1891 պէտք էր նորէն մեզի տեսանելի ըլլար: Արդ D. E. Lamp աստղաբաշխին տեղեկութիւնէն ու մեկնութիւններէն սա եզրակացութեան կը յանգլինք որ Պրորէն մոլորակի 1891ին մեզի տեսանելի չըլլալն հաշուադրական սխալ մը չէր. մոլորակին մեզի անտեսանելի ըլլալուն պատճառները երկնակամարին վրայ պէտք է որ որոնենք:

— Պրորէն մոլորակը 1846ին դանուեցաւ. 1851ին պէտք էր որ երեւնար, ինչ որ հակառակն եղաւ. 1857 մեր հաշուոյ հաւանակ տեսանելի եղաւ, այս թուականիս է որ Bruhns, Pluin-

mer եւ Schulze աստեղագէտները Պրորսէնի մակերևոյթը չափեցին. 1873ի եւ 1879ին նորէն տեսանկէի էր: Արդ ի՞նչ գաղտնի պատճառի համար մոլորակս 1884ին չերեւցաւ: D. Lamp ըստ աստղաբաշխական օրինաց զրաժ էր որ 1890ին Պրորսէն մոլորակը պիտի երևնայ. բայց այս անգամ ալ ի դուր սպասեցինք:

Արդ այս երեւոյթներէս կը հետեւցընենք որ մոլորակիս տեսանկիւթեան պատճառները մեզի անծանօթ են եւ աստեղագէտք՝ սխալած չեն իրենց հաշուոց մէջ:

Արդե՞օք Պրորսէն մոլորակը աստեղաց եւ երկնային մարմնոց յարկով եւ կամ անոնց հետ չփոխելով չ'աներեւուլթացաւ երկնակամարէս:

Յ. Յ. ԱԼԱՆ

ՄԻ ՓԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՂԴԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՄԻՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՆՈՐ ՀՐՍՏԱՐԱԿԵԱԼ ՄԱՏԵՆԻ ՄԸ ԱՌԹԻՒ

Արդաստիկեան փիլիսոփայութեան՝ արդի զետեղեանց պահանջումներուն պատշաճեցուցուելով՝ մատուցած մեծ ծառայութիւնը պիտի կայանայ յայնմ զի հոգեկրօնութիւնը (spiritualisme) պաշտպանեց իւր իսկ ծայրայեղութեանց զէմ, եւ ցուցուց որ, եթէ Հոգեբու եւ Գոնտիլեաքներու զգայաւորական դպրոցն սխալած էր՝ գնելով զազաւարաց ծագումն ու կազմակերպութիւնը պարզապէս եւ արտաքսաբար ի զգայութիւնս, նմին հակառակ՝ Քարթէզեան դպրոցն մի այլ ծայրայեղութեան մէջ ինկած էր նուազեցնելով քան զչափն՝ զգայութեանց եւ դործարանաց կատարած զերբ ի կազմակերպութեան զազաւարաց, եւ ջատագովեց հոգեկրօնութիւնը ընդզէմ յարձակմանց նիւթապաշտից, ընծայելով մարդկային մարմնոյ այն կարեւորութիւնը՝ զոր ունի ի մարդն, եւ զոր Քարթէզիոսի հետեւողք եւ աւանդական դպրոցի աշակերտք կը զլանային մարդոցն Մարդն չէ իսկ «ի իմացականութիւն որուն կը ծառայեն դործարանք», ինչպէս որ Պալանտ կ'ուղէր, եւ ոչ ալ հոգի մը որ կը բնակի ի մարմնի, ինչպէս կը բնակի նաւուղիւ մը ի նաւի, որպէս կը կարծէր ի հնումն Պլատոն՝ եւ զարգիս Քարթէզիոս եւ նորա հետեւողք կը խորհին, եւ ոչ իսկ պարզ եւ անխառն յօրինուածութիւն մը՝ որոյ ուղեղն կը թորէ միտքը՝ ինչպէս որ ըստրդր կը թորէ մազձը, ըստ կոշտ տառութեան նիւթապաշտից Այլ մարդըն է մի էակ բազկացեալ ի հոգւոյ եւ ի մարմնոյ՝ որ զայայաբար (substantiellement) միացած են այնպէս զի երկայունց միասորութենէն մի միայն էակ մը, մի միայն անհատականութիւն մը կը կազմուի:

Հոգին կը կերպանաւորէ մարմինը՝ որ առանց հոգւոյ ոչինչ կարէ առնել, եւ կեանք կու տայ մարմնոյ, մարմինն՝ դործարանաց եւ զգայարանաց ձեռքով՝ հոգւոյն առջեւը կը սլարդէ առարկայից եւ մասնաւոր իրողութեանց տեսքն ու ծանօթութիւնը, որով հոգին վերադման եւ ընդհանրացման միջոցաւ՝ կ'անջատէ հարկաւոր իդէաները, ընդհանրականի, էակի, աննիւթականի, անհունի զազաւարը:

Սեղմեալ իմաստով առնելու է սա հին աւանդը՝ որ կ'ըսէ

«Դիմել է յեմացականութեան՝ որ չեցէ նախ ի զգայութեան»։ Ապաքէն՝ ինչ որ մտայ կը հասնի, ամէն ծանօթութիւն զգայարանքներէն կ'անցնի։ Բայց գաղափարի կազմութիւնը որով միայն չլինար, եւ սխալ է թէ մտախոհութիւնն՝ վերանորոգեալ զգացողութիւն մի է եւեթ։ Մտախոհութիւն ըսածնիս հողին է՝ որ ինքն իր վրայ անդրադառնալով կ'ըմբռնէ այն ծանօթութիւնները՝ զորս զգայարանք իրեն կը մատակարարեն, ոչ ըստ օրինակի բանբերաց՝ որ լուրեր կը հաւաքեն եւ յետոյ անդեկազիր կը մատուցանեն, այլ մտախոհութեան զործակցելով ծանօթութիւններ կու տան իրեն, եւ որոնց միջոցաւ նա կ'ըմբռնէ բոլոր աննկթական եւ միջոցէ ու ժամանակէ անկախ պատճառաբանութիւնները։

Բաւական գեղեցիկ է այն նմանութիւնը՝ որով մարդկային միտքը կը համեմատեն թռուցիկի մը՝ զոր առասան մը կը բռնէ յերկիր եւ որ սակայն իրեն հարկաւոր է բարձրանալու համար յօգս ուր կը շարժի եւ կը ճախրէ աղատութեամբ։ Բայց կտրէ՝ առասանը եւ թռուցիկի իսկոյն կ'իյնայ գետին։ Յերկիր կապուած առասանն է՝ տեսիլն, զգացողութիւնն, զործարանն, իսկ բարձրաթիւի սլացող թռուցիկն է մտածութիւնն, գաղափարն, որ իմացականութեամբ վերացեալ՝ կը բարձրանայ դէպ յընդհանուրն եւ ի բացարձակն։ Եւ ահա այսպէս Արիստոտէլ եւ յետ նորա Պոսիւլէ կրցան սա երկու առածները ըսել, որք առ երեւոյթի հակասական, այլ ճշմարիտ են այլ եւ այլ տեսակէտներով։

Մարդս չխորհիւր առանց պատկերի, եւ, ըստ հետեւորդի, առանց գործարանի։

Մարդս կը խորհի առանց պատկերի եւ առանց գործարանի։

Այսինքն՝ մարդկային միտքը ի հարկէ կը կարօտի պատկերի, զգայարանաց, գործարանաց՝ որ կազմակերպուելու եւ թռիչք առնելու համար պատկերը կը ծնանին, բայց յետոյ միտքն զանոնք կը գերազանցէ, անոնցմէ վեր կը բարձրանայ եւ բոլորովին առնոց անծանօթ գաւառաց մէջ ճախրասլաց կը սաւառնի։ Այս բանս յատուկ է իմացականութեան, զգայական ծանօթութիւնն որ իրեն կարապետն ու պայմանն է եւ զոր յաճախ իրեն հետ յանիրաւի կը շիոթեն, ստորադաս կարողութիւն մի է, հաւասար մարդոյ եւ անասնոյ, նիւթական կարգի կարողութիւն մը, որ ինքն իրեն լոկ տուարորութիւններ ու պատկերներ միայն կը ծնանի եւ յառաջ կը բերէ։ Եթէ խորհուրդն, իմացական գործողութիւնն կախումն ունի, ի ծագմանն, զործարաններէն, զգայարաններէն, սակայն նորա բնութիւնն տար-

բեր է եւ զերազոյն քան զնոսա, եւ յետ ծննդեանն՝ չկարօտիր այլ եւս զործարանաց նիւթական օգնութեան զարդանալու, սրանալու եւ սքանչելիքներ արտադրելու համար։ Ահա այս մրտաքով է որ Պոսիւէ ամենայն ճշմարտութեամբ կրցաւ գոչել. «Երբ Արիստոտել ըսաւ թէ մարդս կը խորհի առանց զործարանաց, սքանչելապէս խօսած եղաւ»։ Ուրիշ բառերով ըսելու համար, իմացականութիւնն՝ զգայարանաց միջոցաւ կը տեսնէ, բայց զգայարանաց տեսածէն տարբեր բաներ կը տեսնէ։

Բ.

Ցարդ ըսածնիս կարծեմք թէ կը համառօտէ եւ կ'ամփոփէ Պ. Տոմէ տը Վորժէի նոր հրատարակած Բոմայական Ըմբռնումն եւ հոգեբանական անուն մատենին զլիսաւոր իմաստն ու միտքը։ Սա է իւր սկզբնակէտն. մարդոյ ըմբռնումն է զգալի եւ իմացական գործողութիւն մը միանգամայն։ Առանց զգայականութեան չիք ըմբռնումն, վասն զի զգայականութեամբ միայն կը հաղորդեմք ընդ այլ արարածս, բայց միւս կողմանէ, ըմբռնումն՝ առանց իմացականութեան՝ չունի ճշմարտութեան արժէք մը, զի խորհողութիւնն է որ կատարեալ եւ ստոյգ ծանօթութիւն մը կը տայ։

Այս պատճառքանութիւնը հիմն առնելով, հեղինակն՝ արտաքին հինգ զգայարանաց դերն ու յօրինուածութիւնը կը սկսի ուսումնասիրել այնպիսի գրական եւ բանաստեղծական ոճով մը որուն չէինք կարող ակնկալել այսքան խրթին նիւթերու մէջ։ Մատենագիրը զմեզ կը տանի Միջերկրականի ափունքը, նարնջենւոյ մը մօտ՝ որ նախ եւ յառաջ իւր հոսաւէտ ծաղկանց բուրմամբ մեր հոտոտելեաց կ'ազդէ, իւր երփներանգ սաղարթախիտ ոստովք, ծաղկամբք, պտղովք եւ ձեւովք մեր տեսանելեաց կը յայտնուի, ծառէն պտուղ մը ինկնալով սօսափիւն կը հանէ, եւ երբ առնլով կ'ուտենք՝ մեր ճաշակելեաց հաճելի տաշաւորութիւն մը, համ մը կը թողու. եւ մեր ձեռքը նորա բունին տանելով շօշափելեաց վրայ ունեցած ազդեցութիւնը մեր ուշը կը զբաւէ։

Բայց այս դեռ իբր յառաջաբան կրնայ նկատուիլ։ Հինգ զգայարանաց գործածութիւնն եւ առարկայն կը կացուցանեն գիտական եւ միանգամայն իմաստասիրական քննախօսութիւն մը, զի մատենագիրն ամենայն իրաւամբ չընդունիր թէ այսօր

մէկ մը կարենայ իմաստասիրել առանց ի կիր արկանելոյ ստացեալ ծանօթութիւնները այն բազմաթիւ կէտերու՝ ուր բուն իսկ զիտութիւնք զիրկընդխառն կը մերձենան իմաստասիրական դիտութեան:

Առանց այս նիւթոց նուիրեալ մէն մի գլուխը վերլուծելու յաւակնութեան, անցողակի իմն եղանակաւ յիշատակենք հանճարեղ վիճաբանութիւն մը երանգաց տեսութեան վրայ, ինչպէս որ արդի զիտութիւնն կու տայ, համեմատութեամբ սքոլաստիկեան տեսութեան: Գիտնականաց ծանօթ է թէ լուսոյ վէտ վէտ ծածանմանց արդի դրութիւնն, որ ըստ ամենայնի իրողութեանց եւ հաշուի համեմատ է, կը նկատէ իրաց զուհաւորութիւնը իբր յառաջ եկած ի ծծմանէ գունաւորեալ ճառագայթից տարբերելոց յայնմանէ՝ որոյ գոյնն է նոյն ընդ առարկային, եւ որ միայն կը ցոլանայ յիշեալ մարմնոց վրայէն: Իսկ ընդհակառակն, ըստ տեսութեան Դպրոցին, գոյնն է սեպհական յատկութիւն մարմնոց՝ որ իւր նմանութիւնը նախ ի միջավայրի, եւ ապա, ի ձեռն միջավայրի, ի գործարանս կը տպաւորէ:

«Ձգայութիւնն չէ նման զգալոյ, այլ ըստ որում արդէն իսկ անցեալ է, հաւասարեալ է զգալոյ» (1) կ'ըսէ Ս. Թովմաս: Այս հաւասարեալ նմանութեան պարհերէ արտաբերութիւն (espèces impresses) անունը կու տային, եւ որոնք զգայական կարողութեամբ կերպաւորեալ պարհերէ արտաբերութիւն (espèces expresses) կ'ըլլային:

Այս երկու տեսութիւնք ընդդիմակ են միմեանց, եւ պէտք էր որ հնադոյնն վերջ ի վերջոյ թողուէր: Բայց արեւ տե՛ս որ կը դռնուին յափշտակեալ անձինք առ որս ոչ զիտական տեսութիւն եւ ոչ ճշդիւ հաստատեալ իրողութիւնք կրնան զօրել եւ եւ զիրենք յաղթահարել ընդդէմ զոյգն ինչ մանրամասնութեանց այն նախադասութեանց՝ զորս Դպրոցն ընդունած է: Հարկ էր սակայն զիտել թէ Սրբատոյէլի եւ նոյն իսկ Ս. Թովմասի ժամանակ, զիտական ծանօթութիւններ մեր օրերուն չափ բնաւ յառաջացեալ չըլլալով, իմաստասէրներն՝ որ արտաքին ինչ ինչ եղելութեանց մեկնութեան կը ձեռնար-

(1) Non est similis sensus sensibili, sed secundum quod jam est passum, est assimilatum sensibili. (comment. de anima, 2.15.)

կէին, զուրկ էին անհրաժեշտ կարեւոր տարրերէ նոցին ճիշդ եւ ստոյգ լուծումը տալու համար: Մեր մատենագիրն ալ զայս կերպով մը կը ճանչնայ երբ կ'ըսէ թէ «Ս. Թովմասի սովորութեանն զուրս էր խիլ արկեալ որոնել այն խնդիրները՝ որոնց հետազոտութեան իւր ժամանակի գիտութիւնն չէր բաւէր»: եւ հրեշտակային վարդապետն ըսել ուղեց պարզապէս թէ «ի միջախորի յառաջ կու գայ այնպիսի տրամադրութիւն մը որ գործարանին վրայ պատկերը տպաւորելու ատակ եւ յարմար է • եւ այս տրամադրութիւնը կը սահմանէր նա իւր նպատակաւ, զի նա նպատակը միայն կը ճանչնար»:

Շատ եւ շատ հաւանական է որ, բազմաթիւ գիպուածոց մէջ՝ յորում ընդդիմութիւն եւ հակառակութիւն մը կը գտնուի ընդ մէջ հաւանական եւ ընդունելի տեսութեանց արդի գիտութեանն եւ այն տեսութեանց զորս պերիպատիկեան փիլիսոփայութիւնն կամ յետ նորա վաղեմի սքոլաստիկքն հիմնած էին միեւնոյն խնդրոց վրայ, ի յառաջագոյն պատճառաբանութիւնն չէ որ ճշմարտութեան ամենէն աւելի համեմատ է, հանդէպ նորանոր հաստատեալ իրողութեանց, որք երբեմն անծանօթ էին, եւ որք ի յետագոյն նոր տեսութիւններ հիմնելու առիթ ընծայեցին:

Իմաստասիրութեան առարկայն կրկին է, մէկ կողմէն կ'ուսումնասիրէ բարոյական եւ իմացական երեւոյթները, էակը, էութիւնը, միւս կողմէն ամէն երեւոյթից զոյացական պատճառը, փիլիսոփայութիւնն այս վերջիններով կը պարապի, հարկ անհրաժեշտ է որ զանոնք ճանչնայ գէթ ընդհանրական տեղեկութեամբք, եւ հետեւաբար բուն գիտութեան տեղեակ ըլլայ: «Այսպիսի նիւթի մը համար, կ'ըսէր հոյակապ գիտնականն, սրամիտ իմաստասէրն եւ միանգամայն քաջ մաթեմատիկոսն Հ. Գառալոնէլ, «խտահելով բան մը ընդունելու չէ անշուշտ, ինքն իրեն քննելը աւելի պատշաճ է: Բայց ասով ըսել կ'ուզուի թէ, իմաստասէրն ըստ պատշաճի ուսումնասիրելու համար ստիպուած է գիտուն մ'ըլլալ»:

Հետեւաբար, փիլիսոփայական դպրոց մը իմացական դասակարգութեան մէջ որչափ ալ բարձր գիւրք ունենայ, երբ տակաւին անկատար եւ ի բազում կէտս ի խանձարուրս գտնուող տիեզերաբանական գիտութեան մը լուսով նիւթական երեւոյթները ուսումնասիրել կ'ուզէ, երբեք իրեն գէտ նախատինք կամ անիրաւութիւն մը ընել չէ՝ ընդունելով թէ այդ դպրոցն կրնայ

սխալած ըլլալ այս ինչ կամ այն ինչ մասնաւոր դիպուածի մէջ։ Ամենամեծ հաւանութեան է, ստուգութիւն չըսելու համար—, որ եթէ Արխատուէլի, մեծին Ալբերտուի եւ Ս. Թովմաս Ակուլի-նայուոյն պէս կորուսմիտ հանճարներ, իրենցմէ վերջը գիտութեան իւրոյս հանած բազմազան իրողութիւնները ճանչնալով այսօր մեր մէջը գային, իրենք զառաջինն պիտի փութային ուղ-ղել իրենց այն տեսութիւնները որոնց հակառակ կու գան այսօր այդ իրողութիւններ՝ զորս չէին ճանչցած յայնժամ։

Գ.

Արտաքին հինգ զգայարաններէն զառ՝ որոնք վեց տարերբ կը յայտնուին, այսինքն՝ համով, հոտով, ճայնիւ, գունով, բորե-խառնութեամբ եւ կարծրութեամբ, որոնց վրայ աւելցնելու է եօթներորդ մ'ալ, միջավայրի զգայութիւնը՝ զոր տեսութեամբ եւ շօշափմամբ կ'ըմբռնեմք, մեր մատենագիրն Թովմայական փիլիսոփայութեան հետ կ'ընդունի ներքին զգայարանը մը՝ զոր կ'անուանէ ։

Այս ներքին զգայարանքով է որ զգայուն էակն կրնայ ար-տաքին զգայարանաց միջոցաւ յառաջ եկած տպաւորութիւն-ները իրարու մերձեցնել, համեմատել եւ զօդել, նոյնպէս զօդել տեսողական իրաց շօշափելի իրերը, որպէս զի առարկայից ձե-ւոյն եւ անջրպետին վրայ դադափար ունենայ, այսու կրնայ նաեւ իւր տպաւորութիւնները իրարու միաւորել եւ զանոնք իւր պի-տոյից, փափագանաց, զանդիտանաց մերձեցունել, եւ այսպէս դործնական ծանօթութիւններ ստանալ։ Այս եղանակը՝ զոր ա-նասունն ալ ունի, Լայպնիճ հետեւեցուցիւն (Consécution) ան-ուանեց։ «Հետեւակցութիւնն, կ'ըսէ Պ, տը Վորթէ, կը յառա-ջանայ տպաւորութենէ ի տպաւորութիւն, զգացողութենէ ի ցան-կութիւն, ցանկութենէ ի զգացողութիւն, ինչպէս որ պատճա-ռաբանութիւնը կը յառաջանայ ստուգութենէ մը յայլ ստու-գութիւն»։ Իմաստասիրութեան լեզուէն չհասկցող կան ծան-ծաղամիտ անձինք կը կարծեն թէ այս ներքին կամ հասարակ զգայարանքի ձեռքով անասնոց կատարած գործողութիւն-ներն իմացական գործողութիւններէն չեն զանազանուիր։

Այդ «իմացական» բառը շատ է հոս, զի իմացակա-նութիւնն (intellectus) բուն իրերը ճանչնալու վրայ կը կայա-նայ, զորս անասունք բնաւ չեն ճանչնար. անոնք միայն տպաւո-

րութիւնները իրարու կը միաւորեն, այնպէս որ զարթուցեալ տպաւորութիւն մը կը զարթուցանէ տպաւորութեանց ամբողջ շարք մը, եւ այդ շարուց հետեւելով՝ անասունք իրենց բազմացած վախճանին կը հասնին:

Այս գլխոյն եւ միւս երկու գլուխներու մէջ մատենադիրը՝ Դպրոցի վարդապետութեան լոյսերով մեկնաբանուած իրողութիւններու վրայ յենելով կը հաստատէ այն էական, հիմնական տարբերութիւնը՝ որով անասնոց բնութիւնը մարդոյ բնութենէն կը զանազանուի. կարծես թէ ձեռք չօշափել կու տայ զայն՝ որ կը զանազանէ անասնոց զգայականութիւնը՝ որով նա իրերը կը ճանչնայ, ոչ ըստ որում գոյացութիւն եւ էութիւն, այլ ըստ որում են նպատակ իւր փսփաքանաց կամ զանգիտանաց, իմացական էակի զգայականութենէն՝ որով նա պատկերներու յայտնած բանը չկրնար ճանչնալ առանց միանգամայն ճանչնալու թէ անիկա գոյացութիւն եւ էութիւն ունի:

Հետեւեալ գլուխն՝ յորջորջեալ «յաղագս իմացական ըմբռնման էակի» կը խօսի, միւս երկու գլուխներու պէս, այն անջրպետին վրայ որով մարդս հոգեբանօրէն կը զանազանուի անասունէն: Այնպէս զի այս կարեւոր նիւթն ամէն կողմէն եւ ըստ ամենայն տեսակէտի հետազօտուած է, թէեւ հեղինակիս երկասիրութեան գլխաւոր վախճանն այն չէր, սակայն չէր հնար ըստ արժանւոյն խօսիլ մարդկային հոգւոյն վրայ՝ ըստ որում ենթակայօպէս միացած է զգալի մարմնոյ, առանց միանգամայն ճառելու այն ստորին ոգւոյն վրայ՝ որ կորստական լինելով՝ ձեւ ու կեանք կու տայ կենդանական դործարանաց: Յայսմ եւս, աւանդական իմաստասիրութիւնն մեծ առաւելակշռութիւն ունի, զի լաւ քան զայն ամենայն, նա՝ կենդանական բնութիւնը վերլուծել, մարդկային բնութեան համեմատել եւ զիրար անջատող էական տարբերութիւնը հաստատել քաջ գիտէ:

Հմտալից ճառ մ'ալ նուիրած է «էակի գաղափարէն ծագող գաղափարաց վրայ», գաղափար մօտութեան, յորմէ կը ծագի թուոյ գաղափարը, գաղափար ժամանակի, ճշմարտի, գեղեցկի եւ բարւոյ. սկզբունք հակասութեան եւ նոյնութեան. ձերջապէս՝ գաղափար էակի, հիմն իմանալի աշխարհի:

«Գիտակցութեան» նուիրուած մասը մեծ կարեւորութիւն ունի հոս. վասն զի մասնաւորապէս յերեւան կը հանէ այն խտտորումը որ կայ ընդ մէջ աւանդական փիլիսոփայութեան եւ

այնր՝ զոր, առ ի չգոյէ լաւագոյն անուան, արդի փիլիսոփայութեան կ'անուանեն: Աստ ոչ այլ եւս խնդիր կը յուղուի իւր խորհիւ, եւս առաւել իբր միակ հիմն առնուլ հոգեբանութեան, զի գիտակցութիւնն չկրնար իմացականութեան առաջին գործողութիւնն ըլլալ. «Իմացականութիւնն ուղղակի իւր առարկային կը զիմէ, եւ, այդ էական գործքը կատարելէն յետոյ, ինք զինքը կը ճանչնայ յիւրում գործողութեան»:

Ուստի մենք ուղղակի մեր գործողութիւնները չենք ճանչնար, եւ իմացականութիւնն ի ներգործութիւն անցնելէն վերջը կրնայ միայն ինքզինքը ճանչնալ եւ ինքն իր վրայ անդրադառնալ: Ինքն իր վրայ անդրադառնալն է էական սեպհականութիւն իմացականութեան, եւ իւր զառաջինն ըմբռնածն է իւր իսկ գործողութիւնն: Յետ այսորիկ պէտք թողուլ «գիտակցութեան եւ երեւութից» վրայ յորինուած այն վաղեմի դատարարութիւնը զոր երբեմն կ'ուսուցանէին, եւ յորում զղայականութիւնք, յիշողութիւն եւ երեւակայութիւնն մեզ կը տրուէին արտաքսաբար իբր եղանակը էութեան հոգւոյն:

Գիտակցութեան երեւութից այս համախմբութիւնն, ըստ մեր մատենադրին, «է տեսակ մը թոհ ու բոհ յորում չիոթած են ամենէն աւելի միմեանց աննման դադարիւրներ, եւ յորոց մարթ է հանել ամենահակասական մակածութիւններ», եւ որոյ չնորհիւ «գիտակցութիւնն եւեթ կը մնայ եւ բոլոր ճանաչողութեան բնոյն տակ կը ճնշուի»:

(Շարայարեի)

ՅՈՎՀ. Վ.ԲՕԼԱԹԵԱՆ:




(1) Per actum cognoscitur ipse intellectus cuius perfectio est intelligere. (Summ. theolog. I, 87, 3).

Պատկերի 13 թուոյն մէջ

Էջ.	Տող.	Վրիպակք.	Ընթերցիւր
302	38	Կրկին եւ կրկին	Կրկին եւ կրկին
»	40	Օրհնելու	Օրհնելու
304	15	Ուղղառ.	Ուղղափառ
305	12	Քառանձաւին	Քառանձաւին
»	13	»	»
»	18	»	»
306	6	Հարիւրամէդր	Հարիւրերորդամէդր
306	19	Նոր Կիւրակէ	Սչխարհամատրան Կիւրակէ
307	13	Բրիտական	Բրիտանական
308	1	Ճօրճթառւնը	Ճօրճթառւն
»	»	Georgetoun	Georgetown

Պատկերի 15 թուոյն մէջ

Էջ.	Տող.	Վրիպակք.	Ընթերցիւր
338	4	Աղքատը .	Աղքատը.
341	10	Իրողութիւնները	Իրողութիւնները
344	25	Կարծիքը	Կարծիքը
347	4	Պատուհառի	Պատուհառի
348	1	Ջրեղեղ	Ջրհեղեղ
»	35	Վիճակին	Վիճակին
349	9	Ա. յնպիտի	Ա. յնպիտի
356	27	Դիտանքը	Դտնանքը
359	38	Քրիստոնէութեան	Քրիստոնէութեան



ՊԱՏԿԵՐ տասն է հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դահեկան
Դաւառաց եւ օտար երկիրներու համար
թղթատարի ծախրն ի միասին հաշուելով 50 « «

Խորաքանցիւր թիւ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւշիլ փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ բերքին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL, N ° 1